

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՅՔԱՐ օրաթերի նոր Տարվա բացառիկը, Բոստոն, 1958 թ.

Ավելի քան երեք հարյուր մեծագիր էջերից բաղկացած այս հատորը բացվում է Ավետիք Խաչատրյանի լուսանկարով: Խմբագրական հոգվածը («Անհատը և իդեալը») զբաղված է Վարպետի մահվան առիթով: «Ավետիք Խաչատրյանը մարմնեղեն էակ,— ասված է այդ հոդվածում,— զրեթե եղավ անշոշափելի էություն մը մտածումի ու զգայնության խորությամբ, հզոր ազդեցությունով մը, որ կրնար հասնիլ հայրենի սահմաններեն հեռու, շատ հեռու ապրող հայերու: ...Հայ ժողովուրդը անոր մեջ տեսավ մարմնացումը հիշտ այն մտքին ու հոգիին, որ պիտի ուզեր իրն ըլլային, ջնջելով մարդուն և իդեալներու միջև հեռավորության ամենավերջին շերտը»:

«Պաշարի» պատմա-բանասիրական բաժնում կան մի շարք հայագիտական բնույթի հոդվածներ և հետազոտություններ, այդպիսիք են, օրինակ, Հրանտ Ք. Արմենի՝ Մովսես Խորենացու մասին հոդվածը, Արամ Երամյանի՝ «Երաժշտագետ Արմեն Տիգրանյանը» և «Վառժապետիկ նկարիչ Եղիշ Թադևոսյանը» հետազոտությունները, Մարթա Արմենի՝ Իջյանի՝ «Հայրենի օպերային ծնունդը», Գր. Ա. Սարգսյանի՝ «Պավլոկյաններ և թոնդրակեցիներ», Ա. Ա. Պետրիկյանի՝ «Ջապել Կ. Բոլաջյան», Լևոն Թյուրյուկյանի՝ «Երկանյան Օհանես Ամիրաջի պատմությունը», Զիթունիի՝ «Պատմությունն ու ժողովրդական առասպելները, Հեթում Ա-ի և Հեթում Բ-ի մոնկոնների հետ պաշինքի մասին» և այլ աշխատություններ:

Հայ ժողովրդի մտավոր անցյալի մասին հուշերով հանդես են եկել Զարուհի Գալեմբյարյանը («Երվազ մը հին օրերեն»), Սիսակ Նալբանդյանը («Անցյալ կյանքես»), Արամ Երամյանը («Հուշեր և գծեր Նար-Դոսից և Հովհ. Թումանյանից»), Պետրոս Ալիշանը («Ուխտագնացություն դեպի Այա Յորկ»), Հովհ. Պողոսյանը («Եթե Տերը կամենա», «Վերհիշումներ»),

Մաշտոց Ա. քհն. Ոսկերյանը («Տարիներ վերջ հանդիպում կամուրջի վրա»):

Գեղարվեստական բաժնին պատվածքներով մասնակցում են Բենիամին Նուրիկյանը («Գառնիկին հետ»), Վահե Հայկը («Գուր, Սրբություն Հայրենի»), Հակոբ Գույումջյանը («Այս, իմ նվիրական Հայրենիք»), Սահակ Պալեղջյանը («Պիթախի հայերենը»), Էդվարդ Սիմբեշյանը («Միծեռնակն ու կոունկը»), Անդրանիկ Անդրեասյանը («Ճակատագրի զոհը») և ուրիշներ:

Մառի Աթմաջյանը, Գոհար Դավիթյանը, Դեռ, Ադրինե Տատրյանը, Մ. Քաջյանը և այլք հանդես են եկել բանաստեղծություններով:

«Պաշարի» այս տարեգիրքը պարունակում է ակնարկներ, գիտա-հետազոտական հոդվածներ և մի շարք այլ արտատպումներ սովետահայ գրողների և գիտնականների գործերից:

„PAGES DE GLOIRE DES VINGT TROIS“, Հրատարակություն Տարագիրների Պաշտպանության Ֆրանսիական Կոմիտեի, Փարիզ, 1951 թ.

1944 թ. փետրվարի 21-ին գերմանական ֆաշիստները երկօրյա ձեռնարկով զատավարությունից հետո Փարիզում գնդակահարեցին Միսակ Մանուկյանին և նրա քսաներկու հերոս գործակիցներին, որոնցից ութը լեհեր էին. հինգը՝ իտալացիներ, երեքը՝ ֆրանսիացիներ, մեկը՝ իսպանացի, մեկ ուրիշը՝ ռումինացի և դարձյալ մի հայ՝ Արմենակ Մանուկյանը: «Մրանք էին հայ Միսակ Մանուկյանի գլխավորած խմբի քաջարի կամավորները,— ասված է այդ հրատարակության առաջաբանում,— որոնք Փարիզում նստած ներխուժողների դեմ գործեցին ամենափայլուն հարձակումները»: Ֆաշիստական դատարանը նրանց վերագրել էր հիտլերական բանակի դեմ հիսունվեց ահաբեկիչ գործողություն, որոնց ընթացքում սպանվել էին հարյուր հիսուն բարձրաստիճանի սպաներ և վիրավորվել վեց հարյուր հոգի:

Հատորը բացվում է Տարագիրների Պաշտպանության Ֆրանսիական Կոմիտեի երկու խոսքով՝ ուղղված ընթերցողներին, որին հաջորդում է նույն Կոմիտեի նախագահ Ժյուստեն Կոդարտի առաջարան-հոգվածը. «Տարագիրների Պաշտպանության Ֆրանսիական Կոմիտեն այս հրատարակությունը կատարեց, որպեսզի նախ շփոթանանք մեր հերոսներին, և երկրորդ... հանրությանը ցույց տանք, թե Ֆրանսիան ինչքան է պարտական տարագիրներին, որոնք ազատագրական կռիվների միջից անցնելուց հետո, ներկայումս մասնակցում են մեր երկրի վերակառուցմանը»։ Այս մասնավորելով իր խոսքը Մ. Մանուշյանի շուրջը, Ժ. Կոդարտն ասում է. «Մանուշյանն օժտված էր անկախ ապրելու անհրաժեշտ այն բոլոր հատկություններով, որ փառապանծ հայ ժողովուրդը ցուցարներից թուրք ջարդարարների ոճրագործ հորդանների դեմ։ Նա սիրում էր Ֆրանսիան և Ֆրանսիայի ժողովուրդին՝ միջազգային ասպնջականության ու միասնության պանծալի ավանդություններով»։

Հատորի երրորդ գլուխը պատմում է, թե ինչ պայմաններում ծնվեց Ֆրանսիայի Դիմադրության Շարժումը, որի մի օրգանն էր Միսակ Մանուշյանի խումբը։ Որոշ մանրամասնություններով ներկայացված են այդ խմբի ահաբեկիչ գլխավոր գործերը, ֆաշիստների սարքած «դատավարությունը», որ վերջանում է «քսաներեք հերոսների» գնդակահարությանը։ Չորրորդ գլխում Դիմադրության Շարժման մամուլից ներկայացված են բաղվածքներ՝ ճշգրիտ պատկերացում տալու համար ֆրանսիացի ընթերցողներին քսաներեք հերոսների դատավարության մասին, որի շուրջը ֆաշիստները ստեղծել էին ստապատիր մթնոլորտ։

Մանուշյանի և նրա գործակիցների լուսանկարները, կենսագրականներն ու բանտից գրած վերջին նամակները զետեղված են վեցերորդ գլխում։ Մանուշյանն իր կնոջը գրած նամակում ասում է. «Ազատագրական բանակին մաս կազմեցի իբր կամավոր զինվոր, և մեռնում եմ, երբ մենք հազիվ մի քայլ հեռու ենք հաղթանակից և նպատակից։ ... Մեռնելուց առաջ հայտարարում եմ, որ ատելություն չունեմ գերմանացի ժողովրդի. դեմ...։ ... Գերմանացի ժողովուրդը և մյուս բոլոր ժողովուրդները պատերազմից հետո, որ այլևս երկար չի տևելու, պիտի ապրեն խաղաղությամբ և եղբայրությամբ»։

Հատորի մնացած գլուխներում մանրամասնությամբ նկարագրված են Մանուշյանի խմբի հերոսական գործերը, հատկապես հիտլերյան զորավար Շոմբուրկի և գեստապոյի պետերից

Ժյուլիուս Ռիտտերի սպանությունները։ Այդ գլուխներում բերված են բազմաթիվ փաստաթղթեր Ֆրանսիայի ընդհատակյա Դիմադրության Շարժման մասին։

ԼՈՒՅՍԻ ԵՐԳԵՐ, Երգարան, կազմեց Ալեքս Բյուրֆջյան, Հրատարակություն Ֆրանսահայ Մշակութային Միության, Փարիզ, 1958 թ.

«... Նոր երգարանի մը հրատարակությունն անհետաձգելի պահանջք մըն էր, — ասված է «Լույսի երգերի» առաջաբանում։ — Արդարև, երբ մենք, Սփյուռքի հայերս, դարձանք այլևս երգազուրկ հավաքականություն մը, անգին, մեր Մայր-Հայրենիքին մեջ օրն օր կծաղկի ու կճոխանա Հայ երգի հազարավոր հատորները։ Հայրենասիրական, ժողովրդական, գավառական. հին ու նոր կենցաղի, աշխատանքի ու սիրո նոր երգեր կստեղծագործվին ու մեզի ալ կհասնին հաճախ երգասկաններով և ֆիլմերով։ Այդ երգերը մեր ֆրանսահայ հայրենակիցներուն լավագույն հաղորդակից դարձնելու մտահոգությամբ, Ֆրանսահայ Մշակութային Միությունը ձեռնարկեց հրատարակել այս երգարանը, որ իր մեջ կամփոփե ոչ միայն հայրենասիրական նոր երգեր, այլև մեր ժողովրդական շատ հին երգեր, որոնք հետզհետե մոռացության կենթարկվին»։

«Լույսի երգեր» երգարանը, որ պարունակում է շուրջ երեք հարյուր երգերի բառեր, բաժանված է յոթ մասի։ Առաջին մասում զետեղված են Հիմներ, Չոներ, ինչպես նաև սովետահայ ու սփյուռքահայ գրողների մի շարք ստեղծագործություններ՝ նվիրված Սովետական Հայաստանին։ Երկրորդ մասը Աշխատանքի, նոր կենցաղի և սիրո երգեր ընդհանուր խորագրի տակ պարունակում է շուրջ վաթսույն երգ, մեծ մասամբ սովետական հեղինակների և կոմպոզիտորների ստեղծագործությունները։ Երրորդ մասն ամբողջությամբ հատկացված է Թաթուկ Ալթունյանի ձայնագրած կամ մշակած ժողովրդական երգերին և պարերգերին։ Չորրորդ մասում Կոմիտասյան երգեր խորագրի տակ զետեղված են Կոմիտասի ձայնագրած գեղջկական երգերը, ինչպես նաև Ա. Մեսումենցի, Գրիգոր Սյունիի, Հովհ. Բաղդասյանի մի շարք երգեր։ Հինգերորդ մասը հատկացված է Ժողովրդական, վեցերորդը՝ Գուսանական հին ու նոր երգերի։ Յոթերորդը՝ Տաղիկներ... Տողիկներ... ընդհանուր խորագրով ընդգրկում է Ա. Իսահակյանի, Գևորգ Էմինի, Սիլվա Կապու-

տիկյանի և մի շարք սփյուռքահայ բանաստեղծների սիրված ստեղծագործությունները:

«Լույսի Երգեր» երգարանը պատկերազարդ է, Երգարանում զետեղված են մի շարք սովետահայ բանաստեղծների ու կոմպոզիտորների նկարները:

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՐ-ՉԱՆԻ ԻՍԹԱՄՊՈՒԼԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ, ՊՈԼԻՍ, 1957 թ.

Արամյան Սանուց Միության կազմած պոետահայ գրողների այս ժողովածուն բացվում է թուրքահայոց պատերազմի Գարեգին արքեպիսկոպոսության հոգևածով: Պոսահայոց գրական շարժման մասնակից գրեթե բոլոր տարեց ու երիտասարդ գեմբերը ներկա են այս ժողովածուի մեջ իրենց հոգևածներով, լուսանկարներով և կենսագրական հակիրճ տեղեկություններով: Դրանք են՝ Հ. Մեծուրի, Հայկանուշ Մարկի, Վ. Ս. Մովսեփյան, Զոհակյան, Թ. Ազատյան, Ա. Մերազյան, Ազրինե Տատրյան, Սիրվարդ Նյուպեկյան և շատ ուրիշներ:

«Համապատկեր», — գրում է Բեյրութի «Զարյուն» թերթը, — խոստմնալից վեպություն

մըն է (հակառակ իր կարգ մը թերինություն) և անոր մաս կազմող գեմբերը իրենց վիճակված գերին՝ պատասխանատու գինվորներ են, որոնք նետված են գրական գաշտ՝ անհավասար կռիվ մղելու համար հանուն հայ մշակույթին»:

ՍԻՐՎԱՐԴ ԱՐԱՄ ԱԶՐԳՊԱՇՅԱՆ, ԿԵՆՍԱԳՐՈՒՄՈՒՆ, ՊՐԱՎԻԴԵՆԱ, 1957 թ.

Այս գիրքը սեղմ գեմբով ներկայացնում է հայտնի հասարակական գործիչ Արամ Ազրգպաշյանի կյանքն ու գործունեությունը: Հեղինակը կարևոր տեղ է հատկացրել թուրքիայի հայերի XIX դարի վերջերի ծանր վիճակի պատկերմանը: Նկատի ունենալով, որ Արամ Ազրգպաշյանը գործել է գլխավորապես Փոքր Հայքում, հեղինակը տեղեկություններ է հաղորդում այդ շրջանում հասարակական գեր կատարած ուրիշ գործիչների մասին, Պոլսի առաջին ցույցերի, 1895—1896 թթ. հայկական կոտորածների և այլ պատմա-քաղաքական խնդիրների մասին:

Սիրվարդի գիրքը, որ բաղկացած է շուրջ 160 էջից, պարունակում է մի շարք հասարակական գործիչների նկարները, որոնք կապ են ունենցել Ա. Ազրգպաշյանի հետ:

ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՐԱՏՈՒ

Հալոյր Պառնոյանի անվան թատերախումբ

Բուխարեստի Ստեփան Շահումյանի անվան Հայ կուլտուրայի տան հանդիսաւորահում տեղի է ունեցել հանդիսավոր նիստ՝ թատերական կուլեկտիվի անվանակոչման և պատվո նշանների բաշխման առթիւ: Կուլտուրայի տան անօրեն Կ. Ազատյանը խոսք առնելով նշեց, — գրում է «Նոր կյանք» թերթը, — թե այս հանգեսի առթիւ մի շարք սիրող զերասանների պիտի արվի ԹԺԹ-ի կրթական-մշակութային նախարարության «Մասսայական մշակութային աշխատանքի մեջ առաջավոր Պատվո նշանը», և թատրոնի հիմնադրութան տասնամյակի առթիւ թատերական կուլեկտիվին պետք է արվի անուն:

«Նոր կյանք» թերթի տեղեկութայն համաձայն պարզեատրվել են հետևյալ երիտասարդ արվեստագետները՝ Տիգրան Կարժարյան, Մարիամ Զաքարյան, Ասատուր Հալապեկյան,

Մկրտիչ Փափագյան, Թագուհի Հայրապետյան-Սայապալյան, Կարապետ Սայապալյան, Արտաշես Ծամճյան, Թագուհի Մաղիկյան, Պերճուհի Ծամճյան, Արսեն Սայան, Զավեն Թագևոյան, Աղավնի Քերփիլյան, Տիգրան Տեր-Մարկոսյան, Փայլակ Գաղապյան, Աննիկ Պալյան, Արտաշես Հայրապետյան, Տիգրանուհի Քեչյան:

Ստեփան Շահումյանի անվան կուլտուրայի տան խորհրդի որոշման համաձայն թատերական կուլեկտիվին արվել է հայ մեծ գրամատուրգ Հակոբ Պարոնյանի անունը:

Կոմիտաս երգչախմբի համերգ

Բուխարեստի Ստեփան Շահումյանի անվան Հայ կուլտուրայի տան «Կոմիտաս» երգչախումբը համերգային մեծ ծրագրով հանդես է եկել ուսանողական տան հանդիսաւորահում: «Համերգի առաջին մասին երգչախումբը, — գրում է «Նոր կյանք» թերթը, — հաջողութամբ կա-

տարեց շարք մը կոմպոզիտորներու գործերը, որոնցմէ կնշենք Կ. Զաքարյանի «Խաղաղութիւն», Ղու. կհաղթես», Կոմիտասի «Անձրեն եկա՛վ» և Ս. Նիկոլեսկուի «Եար-աշա» երգերու: Այս համերգին մասնակցել են Երիտասարդ մեներգիչների ազգային մրցման լաուրէատ երգչուհի Անահիտ Քերփիշյանը և Պետական մրցանակի լաուրէատ, ՌԺԽ-ի օպերայի և բալետի թատրոնի մենակատար բարիտոն Դավիթ Հովհաննեսյանը: Համերգը վարել է դիրիժոր Կարապետ Հարությունյանը, զաշնամուրի վրա նվագակցել է Շաբէ Եղեկեյանը: «Կարապետ Հարությունյանը,— գրում է «Նոր Կյանք» թերթը,— երկար տարիներ է վեր դնելով ի Ստեփան Շահումյան Հայ Կուլտուրայի Տան Կոմիտաս Երգչախումբին: Բէ հայ ազգաբնակչութիւն և թէ ուսմէն երաժշտական շրջանակներուն մէջ,

ան գնահատված է իբրի զգայուն արվեստագետ մը, որ իր ամբողջ եռանդով նվիրված է երաժշտական գործունեության»:

«Սոֆիկի սխալը» կումեդիան Պլովդիվում

Բուլղարական Ռեսպուբլիկայի Պլովդիվ քաղաքի «Հայ Մշակութային Տան» սրահում «Երևան» թատերախումբը ներկայացրել է Գ. Տեր-Գրիգորյանի «Սոֆիկի սխալը» կոմեդիան, Սիրանուշի մահվան 100-ամյակի առթիվ: Ներկայացումը, որին մասնակցել են Երիտասարդ սիրող-դերասաններ, մամուլի կողմից գնահատվել է որպէս թատերախմբի անվիճելի հաջողությունը: Բեմագրությունը վարել է ռեժիսոր Ժ. Փափազյանը:



Ավ. Իսահակյանի ճիշատակի երեկո

Ինչպէս Միլիտարի հայաշատ քաղաքներում, այնպէս էլ Բելլուսում «Լիրանանահայ վերածնունդ միության» նախաձեռնությամբ տեղի է ունեցել հիշատակի հանդես՝ նվիրված Ավ. Իսահակյանին: Այդ հանդեսին նախագահել է Լիրանանի ինֆորմացիայի միսիսարու Հարգանքի խոսք են ասել Բենիամին Ժամկոչյանը՝ Սահակյան Ալզ. Վարժարանի տնօրէնը, Սիրան Սեղան՝ «Երիտասարդ Հայուհի» թերթի խմբագիրը և բանաստեղծ Վահէ Վահյանը: Ներկա գտնվող արարներին մեծ վարպետի դործը ներկայացնելու համար կարգադրվել է արարներն լեզվով մի ուղերձ:

Երաժշտական երեկոներ

Բելլուսում հայ երգչուհի Սեդա Բալուլյանը համերգային ծրագրով հանդես է եկել Բաղդադի Հ. Ն. Բ. Միության սրահում: Ծրագրի առաջին մասում երգչուհին կատարել է Կոմիտասի, Արմեն Տիգրանյանի, Համբարձում Պերպերյանի և ուրիշ հայ հեղինակների ստեղծագործություններից, իսկ երկրորդ մասում՝ արևմտաեվրոպական հեղինակների գործերը: \

Բելլուսի Ուեստ-Հոլ սրահում տեղի է ունեցել զաշնակահարուհի Մ. Քասունու երաժշտական երեկոն, որի մասին գովեստով են խոսում Բելլուսի թերթերը: Ծրագրում եղել են արիւմբուտաեվրոպական հեղինակների գործերը:

«Սպենդիարյան» երգչախմբի համերգը

Հալեպ քաղաքի «Սպենդիարյան» երգչախումբը համերգային մեծ ծրագրով հանդես է եկել նույն քաղաքի Հ. Բ. Բ. Միության սրահում: Համերգը վարել է Երիտասարդ դիրիժոր Ժիրայր Իսկենյանը: Ծրագրի առաջին մասում կատարվել են Սիրիայի քայլերդը բառաձայն խմբով, Աշոտ Սաթյանի «Ես իմ անուշ Հայաստանի», Կարո Զաքարյանի «Զինար բռնով», Համբարձում Պերպերյանի «Հոյնար» ստեղծագործությունները: Ծրագրի երկրորդ մասը բաղկացած է եղել մեծ մասամբ արարական երգերից: Մենակատար Պետրոս Գնաջյանը երգել է արար կոմպոզիտոր Աբգուլ Վահարի երկու ստեղծագործությունները: Համերգի ընթացքում կատարվել են նաև Գուսան Աշոտի «Ուր է», Ալեմշահի «Նազեր» և մի շարք ուրիշ գուսանական երգեր:

Մեծարենցի մահվան 50-ամյակը

Պոլսի Եսայան Սանուց Միությունը կազմակերպել է մի հուշ-երեկո՝ նվիրված մեծատաղանդ բանաստեղծ Միսաք Մեծարենցի մահվան 50-ամյակին: Գնահատելով Մեծարենցի ստեղծագործական վաստակը, Երվթ ունեցողները նշել են դրանց գեղարվեստական բարձր արժեքը, ինչպէս նաև պատվավոր տեղը հայ գրականության մէջ:

Զարուհի Դոլուխանյանի համերգներ

Սովետական անվանի երգչուհի Զարուհի Դոլուխանյանի համերգը հատկապես լոնդոնում մեծ խանդավառություն է առաջացրել ոչ միայն սփյուռքահայ, այլև օտար հասարակայնության լայն խավերում: Զարուհի Դոլուխանյանը համերգային մեծ ծրագրով հանդես է եկել լոնդոնի Ֆեստիվլի Հոլի սրահում: Համերգի առաջին մասում Դոլուխանյանը կատարել է ուսուցիչական երգեր՝ «Դոլուխանյանի» և «Դոլուխանյանի» ստեղծագործությունները, իսկ երկրորդ մասում՝ արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործությունները: «Լույս Փարիզի» թերթի թղթակցի տեղեկությունների համաձայն ունկնդիրների վրա խոր տպավորություն է գործել Շուբերտի, Շոպենի, Ռավելի, Ռոսինիի երգերի «անզուգական» կատարումը: Սովետական երգչուհու կատարողական մեծ վարպետությունը, նրա հիասքանչ ձայնը դուրս էր եկել ներկայորդիների, որոնք երկար ծափահարություններով հրավիրել են երգչուհուն ծրագրից գուրու մի շարք երգեր կատարելու: Համերգից հետո մի մեծ բազմություն՝ դեսպաններ, բարձրաստիճան պաշտոնյաներ, արվեստագետներ, լրագրողներ և ուրիշներ շնորհավորել են տաղանդավոր երգչուհուն: «Այս շաբաթ կիսկվի փոքրաթիվ խումբով մի հայերով», գրում է «Լույս Փարիզի» թերթի կողմից լոնդոն ուղարկված թղթակիցը, — որոնք սովետահայ երգչուհիին մայրենի լեզվով հայտնեցին իրենց խանդավառ գնահատանքը»:

2. Դոլուխանյանի համերգն արժանացել է անգլիական մամուլի և երաժշտական քննադատների բարձր գնահատականներին: Ահա դրանցից մի քանիսը. «Նրա ձայնը՝ մրցակից չունի», — գրում է «Դեյլի Մեյլ» թերթը: «Հազվագյուտ ձայն և կատարչալ մեցցո-սոպրանո», — շեշտում է «Դեյլի Տելեգրաֆը»: «Արևելքից եկած հարուստ ու արտակարգ ձայն», — գրում է «Էքսպրես» թերթի երաժշտական տեսաբանը: «Սովետական այս երգչուհու արվեստը կատարյալ է... նա երգում է այնքան հեշտությամբ և այնքան բնական, ինչպես շատ մարդիկ խոսում են առանց ճիգի, չափազանցության կամ արվեստականության», — ընդգծում է «Դեյլի Ուորլդը»: «Պատերազմից հետո լոնդոնում արժեքավոր մեցցո-սոպրանո լսած էինք Վիկտորիա Լուանկելուսը — գրում է «Թայմս» երաժշտական քննադատը, — կարող եմ ասել, թե Դոլուխանյանի ձայնը հավասար-

վում և նույնիսկ գերազանցում է այդ մեծ երգչուհու ձայնը»:

Դաշնական Սեդրակ Յավրույան

Փարիզահայ Երիտասարդ դաշնակահար Սեդրակ Յավրույանի դաշնամուրի վերջին համերգը, ինչպես տեղեկացնում է «Լույս Փարիզի» թերթը, պսակվել է մեծ հաջողությամբ: Թե՛ հայ, թե՛ ֆրանսիացի երաժշտական քննադատները գոհունակությամբ են արտահայտվել տաղանդավոր դաշնակահարի կատարողական արվեստի մասին: «Դիդ դը Ֆրանս» թերթը Յավրույանի ելույթին նվիրված մի հոդվածում հատկապես ընդգծում է, թե «այս դաշնակահարը իր ոճով և ճաշակով ժողովրդական է»:

Հայ երգի և քառերոնի երեկո

Փարիզի Սալ Ֆարալիի հանդիսասրահում ապրիլի 23-ին տեղի է ունեցել հայ երգիչ և քառերոնիստ նվիրված երեկո: Ծրագրի առաջին մասում հանդես է եկել «Նաիրի» երգչախումբը, (ղեկավարությամբ երիտասարդ երաժշտագետ Գևորգ Յանբեկյանի): «Այդ խմբի երգը, — գրում է «Լույս Փարիզի» թերթը, — կարծես մեզի սփոփանք կբերեր հայրենականը հորիզոններին: Այդ երգերը մեր ծաղկած սրտերուն հույզ ու հույս, խանդ ու եռանդ կպարգևեին: Խանդավառության այն ալիքը, որ բարձրացավ ժողովրդյան ծոցին դեպի երգչախումբը ու իր խմբավարը, արդար վարձատրություն եղավ այն տրենաճան աշխատանքին, որուն լրծված է Գևորգ Յանբեկյանը»: Ծրագրի երկրորդ մասում ներկայացվել է դրամատուրգ Գրիգոր Վահանի «Ազգապահպանումի գրասենյակ մի» կատակերգությունը, որի թեման հեղինակը վերցրել է ֆրանսահայ կյանքից:

Դանիել Վարուժանի հիշատակին

Հարգելու համար մեծանուն բանաստեղծ Դանիել Վարուժանի հիշատակը, Բելգիայի Հայ Ուսանողական Միությունը մի հուշատախտակ է դնողել Կան քաղաքի համալսարանի կենտրոնական մատենադարանում, որ Վարուժանի հաճախել է ուսանողական տարիներին: Հուշատախտակը, որ պատրաստված է եղել ֆրանսիացի քանդակագործ Ռոժե Բարոնի կողմից, ինչպես հաղորդում է Բելգիայի «Զարթոնք» թերթի Բելգիայի թղթակիցը, կրում է մեծ բա-

նաստեղծի դիմանկարը և հայերեն, ֆրամանդերեն և ֆրանսերեն լեզուներով մակագրություններ:

Դասախոսությունը Դրիգոր Զոհրապի մասին

Փարիզահայ երիտասարդ մտավորական խորմյանը Ֆրանսահայ լսարանի հերթական դասախոսությունների շարքում հանդես է եկել Դրիգոր Զոհրապի կյանքին ու գործին նվիրված դասախոսությամբ: «Երիտասարդ դասախոսը,— գրում է «Լույս Փարիզի» թերթը,— որ խղճմունքով ուսումնասիրել էր իր նյութը, մեզի ներկայացրեց Զոհրապը՝ պատանի, ուսանող, երկրաչափ, փաստաբան, երեսփոխան, քաղաքագետ, գրող ու մեծ հայրենասեր»: Դասախոսության վերջում զեկուցողը հասարակության համար կարգացել է Զոհրապի բնույթը և էությունը:

* * *

Հ. Փափազյանի համերգը

Դրիթյոր Հայկ Փափազյանի կազմած «Փող Ջորջ» սիմֆոնիկ նվագախումբը Ջորջ Վաշինգտոնի բարձրագույն վարժարանի սրահում հունիսի 8-ին տվել է մի բաց համերգ: Այս համերգը, որ գրավել է բազմաթիվ ունկընդիմների, արձագանք է գտել սփյուռքահայ մամուլի էջերում: «Հետաքրքրական հայտագիրն սկսվեց,— գրում է «Լրաբեր» թերթը,— Վազների «Լոհենգրինով», որն աշխուժացնող մի սկիզբ եղավ նվագախմբի համար: Վերերի «Կաթարական նետածիգ»-ի ու վերջույնից հետո, Հայդենի Սոլ-մաժոր սիմֆոնիան հնչեց զեղեցիկ ու ոգեշունչ մեկնաբանությամբ»:

«Զուլթակահար Վարուժան Գոճյանը,— շարունակում է «Լրաբերը»,— երբեմնի հրաշքերեսն է, որն այսօր հասունացած և ամրապնդված երիտասարդ ջութակահար է, մի գեղեցիկ վկայություն տվավ իր մասին՝ հանդես գալով որպես Սեն-Սանսի «Խնորոգուկցի» և «Թոնդո-Կապրիչիոդի» մենակատար: Գոճյանը տեր է տեխնիկական վիժնարի շնորհի և խոլընթաց տեմպերամենտի: Իր խորապես հուզիչ կատարումը հիացմունք ու խանդավառ ծափեր խլեց հուզատրոփ ունկնդիրներից: Ապա նվագախումբը կատարել է Արամ խաչատրյանի վալսը «Դիմակահանդես» սյուիտից: Դրիթյոր Հայկ Փափազյանի «Հմուտ ղեկավարության տակ,— ընդգծում է «Լրաբեր» թերթը,— ամ-

Նկարիչ Շարլ Ժերանյանի ցուցահանդեսը

Ֆրանսահայ նկարիչ Շարլ Ժերանյանի ցուցահանդեսի մասին ֆրանսիական մամուլը արտահայտվել է դժասանքով: Ահա մի քանի մեջբերում. «Ժերանյանը փայլուն գեղանկարիչ է»,— գրում է «Լա Ռեյու Մոդերն» թերթը: «Ժերանյանը ներկայացնում է որակավոր աշխատանք: Գույների ինքնաբերականություն ու վճռականությունը, ինչպես նաև նատյուրմորտների ձևերի լավ ցուցադրությունը, ինքնատիպ են դարձնում նրա գործերը»,— ընդգծում է «Էն-Ֆրոմասիոն Արտիստիկ» թերթը: «Ժերանյանը լավ աշխատանքի ճաշակ ունի, որ արդյունք է իր մտահոգությունների, պրպտումների և դուրազագաց զննության: Նա մեր լավագույն նկարիչներից մեկն է»,— եզրակացնում է «Մասկ է Վիզաժ» տմսաթերթը:

Ըողջ կատարումը իսկական վայելք եղավ զմայլված ունկնդիրների համար, որոնք ջերմորեն ընդունեցին կատարողներին և դժվարանում էին հեռանալ դահլիճից»:

Դաշնական Զավեն խաչատրյանը Ամերիկայում

Եգիպտահայ տաղանդավոր դաշնակահար Զավեն խաչատրյանը հանդես է եկել Նյու-Յորքի Դաուն Հոլի սրահում, ծրագրում ունենալով Շուման, Ֆրանկ, Ալբենիս և Արամ խաչատրյան:

խաչատրյանի այս ելույթը, որ առաջինն է Ամերիկայում, շարունակություն է նվիրաբերում մի շարք քաղաքներում նրա կատարած բազմաթիվ շրջագայությունների և եգիպտոսում տված համերգների:

Դաուն Հոլի ելույթը արժանացել է ամերիկյան թերթերի գնահատություններ. «Զավեն խաչատրյանի մեկնաբանությունը,— գրում է Նյու-Յորք Թայմս» թերթը,— ընթացյալ որոշ ջերմությամբ և ուժգնությամբ, իսկ «Նյու-Յորք Հերալդ Տրիբյուն» թերթն ընդգծում է. «Արամ խաչատրյանի Տոկատայի կատարման ժամանակ Զավեն խաչատրյանը հայտնաբերեց սահուն տեխնիկա»:

«Զավեն խաչատրյանը,— գրում է «Լրաբեր» թերթը,— փայլուն կատարողն է Արամ

Խաչատրյանի, Բրամսի, Բախի դաշնամուրային ավելի քան 85 երկերի (կոնցերտ, պրելյուդ, ֆուգաներ և այլն), որոնք հաճախ են հաղորդվում Նդիպտոսի ռադիոկայանից»:

Կոմպոզիտոր Օննիկ Պերպերյանը Ֆիլադելֆիայում

Փարիզահայ կոմպոզիտոր-դիրիժոր Օ. Պերպերյանի սիմֆոնիկ նվագախմբի տեղի է ունեցել Ֆիլադելֆիայի Ֆլայշըր Օդիտորիումի սրահում մարտի 2-ին: Պերպերյանն իր անառախ ունկնդրություն, հասարակությանը ներկայացրել է իր վերջին ստեղծագործությունը՝ «Ջութակի կոնցերտը»: Կատարվել են նաև կոմպոզիտորի «Հայրենիք» սիմֆոնիան, Բարխուդարյանի, Կոմիտասի, Տիգրանյանի, Սաթյանի մի շարք ստեղծագործությունները:

Ջուրախանու ժիրայր Քանրաճյանը Ամերիկայում

Նգիստահայ տաղանդավոր ջութակահար Ժիրայր Քանթարճյանը, որ շրջագայություն է կատարել Ամերիկայում, արժանացել է խանդավառ ընդունելության:

«Երեկոյի մենակատար ֆենոմենալ ջութակահար Ժիրայր Քանթարճյանը, — ընդգծում է «Սան Ֆրանցիսկո Էկզեմփլեր» թերթը, — ողջունվեց որպես մեծ ջութակահար... Չեմ կարծում, որ ժամանակակից որևէ ջութակահար, որքան էլ նշանավոր լինի, կարողանա Պապանինի կոնցերտը ավելի լավ կատարել, որքան Ժիրայր Քանթարճյանը»: «Սան Ֆրանցիսկո Նյուզ» և ուրիշ թերթեր միևնույն հիացական տողերով ողջունում են Ժիրայր Քանթարճյանի արվեստը: